



Համարը N 1206-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2006.09.13/48(503)
Հոդ. 1004

Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 23.09.2006

Ընդունման ամսաթիվը 29.06.2006
Ստորագրման ամսաթիվը 26.08.2006
Վավերացման ամսաթիվը 02.09.2006
Ուժը կորցնելու ամսաթիվը

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
2 սեպտեմբերի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունիսի 2006 թվականի N 1206-Ն

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «Ժթ» կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

(նախաբանը փոփ. 04.10.12 N 1262-Ն)

1. Հաստատել ճանապարհային երթևեկության կազմակերպման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2006 թ. օգոստոսի 26
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2006 թվականի
հունիսի 29-ի N 1206-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներով, բնակավայրերի փողոցներով (այսուհետ՝ ճանապարհներ) երթևեկության կազմակերպման և դրանց հետ կապված նախագծային, կառուցման, հիմնանորոգման, վերակառուցման, ընթացիկ (միջին) նորոգման աշխատանքների, համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայի կազմման և հաստատման աշխատանքների, ինչպես նաև հետազոտությունների գործընթացը:

(1-ին կետը փոփ. 30.12.21 N 2186-Ն)

2. Սույն կարգի նպատակը ճանապարհային երթևեկության կազմակերպումը՝ տրանսպորտային միջոցների և հետիոտների անխափան ու անվտանգ երթևեկության ապահովումը և ճանապարհների թողունակության մեծացումն է:

3. Սույն կարգի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման բոլոր ճանապարհների վրա՝ անկախ սեփականության ձևից:

Ոչ ընդհանուր օգտագործման ճանապարհների սեփականատերերը, հաշվի առնելով երթևեկության հատուկ պայմանները և դրանցով տրանսպորտային միջոցների շահագործման յուրահատկությունները, կարող են մշակել նաև լրացուցիչ պայմաններ:

4. Սույն կարգում օգտագործված հասկացություններն են՝

ճանապարհի թողունակություն՝ միավոր ժամանակահատվածում ճանապարհի կտրվածքով հանդիպակաց ուղղություններով անցնող ավտոմոբիլների առավելագույն թիվը,

ճանապարհի երթևեկության ինտենսիվություն՝ միավոր ժամանակահատվածում (օր, ժամ) ճանապարհի որևէ կտրվածքով հանդիպակաց ուղղություններով անցնող տրանսպորտային միջոցների թիվը,

համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմա՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց լիազորությունների շրջանակներում համայնքի մեկ կամ մեկից ավելի բնակավայրերի ճանապարհային երթևեկության կազմակերպման լուծումների հիման վրա կազմված և հաստատված փաստաթուղթ, որն իրենից ներկայացնում է տեխնիկատնտեսական պահանջներին համապատասխանող միջոցառումների ամբողջականություն՝ փոխհամաձայնեցված ճանապարհը տնօրինողի ավտոմոբիլային ճանապարհների ցանցի զարգացման (կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման, ընթացիկ (միջին) նորոգման, պահպանման ու շահագործման) ծրագրերի, համայնքի հեռանկարային զարգացման ծրագրերի, գլխավոր հատակագծի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի կամ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների հետ:

(4-րդ կետը փոփ. 04.10.12 N 1262-Ն, լրաց. 30.12.21 N 2186-Ն)

II. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Ճանապարհային երթևեկության կազմակերպման հիմնական խնդիրներն են՝

ա) ճանապարհների և դրանց ինժեներական կառույցների նախագծման, կառուցման, հիմնանորոգման, վերակառուցման, ընթացիկ (միջին) նորոգման, կահավորման, շահագործման և պահպանման աշխատանքների կատարման ժամանակ երթևեկության անվտանգության պահանջների ապահովումը.

բ) ճանապարհային երթևեկության պայմանների և վիճակի ուսումնասիրությունը, դրանց կատարելագործման ուղղությամբ միջոցառումների մշակումը.

գ) անբավարար ճանապարհային պայմանների (ճանապարհի երկրաչափական տարրերի, տեխնիկական վիճակի, այդ թվում՝ դրա սարքավորումների ու կահավորանքի) պատճառով տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարների վերլուծությունը, դրանց առաջացման պատճառները վերացնելու ուղղությամբ միջոցների ձեռնարկումը:

(5-րդ կետը փոփ. 30.12.21 N 2186-Ն)

6. Ճանապարհային երթևեկության կազմակերպումն իրականացնում են՝

ա) Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների (այդ թվում՝ բնակավայրերով անցնող տարանցիկ ճանապարհների հատվածների՝ բացառությամբ Երևան քաղաքի) մասով՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), իսկ մարզային (տեղական) նշանակության ճանապարհների մասով՝ համապատասխան մարզպետարանը.

բ) Երևանի ճանապարհների (այդ թվում՝ քաղաքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության տարանցիկ ճանապարհների հատվածների) համար՝ Երևանի քաղաքապետը.

գ) ընդհանուր օգտագործման ոչ պետական ճանապարհների (բացառությամբ բնակավայրերով անցնող տարանցիկ ճանապարհների հատվածների) համար՝ դրանց սեփականատերերը.

դ) ոչ ընդհանուր օգտագործման ճանապարհների համար՝ դրանց սեփականատերերը:

(6-րդ կետը խմբ. 30.12.21 N 2186-Ն)

7. Ճանապարհային երթևեկության կազմակերպումն իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմինները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների սահմաններում՝ ա) փտանգավոր և անբավարար թողունակությամբ ճանապարհի տեղամասեր հայտնաբերելու նպատակով ուսումնասիրում են ճանապարհային երթևեկության պայմաններն ու վիճակը,

բ) ձեռնարկում են միջոցներ ճանապարհների երկրաչափական պարամետրերի կատարելագործման, երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցներով կահավորումը բարելավելու համար,

գ) տալիս են եզրակացություններ ճանապարհների, ճանապարհային կառույցների, երկաթուղային գծանցների, քաղաքային էլեկտրատրանսպորտի գծերի շինարարության և վերակառուցման նախագծերի մասին,

դ) իրականացնում են վերահսկողություն ճանապարհների շինարարության և վերակառուցման նորմատիվային փաստաթղթերի պահանջների պահպանման նկատմամբ,

ե) երթևեկության կազմակերպման օբյեկտները շահագործման ընդունելիս՝ մասնակցում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված աշխատանքային և պետական հանձնաժողովների աշխատանքներին,

զ) իրականացնում են վերահսկողություն ճանապարհները, ճանապարհային կառույցները և երկաթուղային գծանցները երթևեկության համար անվտանգ պահպանելու, ճանապարհները երթևեկության կարգավորման տեխնիկական միջոցներով կահավորելու նկատմամբ,

է) ճանապարհներին, երկաթուղային գծանցներում հիմնանորոգման, վերակառուցման, ընթացիկ (միջին) նորոգման և այլ աշխատանքներ կատարելիս վերահսկում են նորմատիվային փաստաթղթերի, ինչպես նաև երթևեկության անվտանգության ապահովման պահանջների կատարումը,

ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համապատասխան քննարկում և եզրակացություն են տալիս համաձայնության համար իրենց ներկայացված ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների երթուղիների մասին:

(7-րդ կետը փոփ. 30.12.21 N 2186-Ն)

8. Ճանապարհային երթևեկության կազմակերպումն իրականացնողները տրանսպորտային միջոցների և հետիոտների անխափան ու անվտանգ երթևեկության համար անհրաժեշտ ճանապարհային պայմաններ ստեղծելու նպատակով համագործակցում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ ճանապարհային ոստիկանություն) հետ, իսկ փոխադարձ համաձայնության դեպքում համագործակցում են նաև ճանապարհաշինարարական, կոմունալ և այլ կազմակերպությունների, նախագծային, բարձրագույն ուսումնական հաստատությունների, ինչպես նաև համապատասխան լիազորություններ ունեցող այլ անձանց հետ:

(8-րդ կետը փոփ. 04.10.12 N 1262-Ն, 30.12.21 N 2186-Ն)

III. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

9. Ճանապարհային երթևեկության կազմակերպման աշխատանքներն իրականացվում են ճանապարհների, երկաթուղային գծանցների, քաղաքային էլեկտրատրանսպորտի գծերի շինարարության, վերակառուցման նախագծերի հիման վրա, որոնք կազմվում են սույն կարգի 6-րդ կետում նշված համապատասխան մարմնի, ճանապարհի սեփականատիրոջ որոշմամբ՝ նախագծային կազմակերպությունների և (կամ) համապատասխան լիցենզիա (թույլտվություն) ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից:

10. Նախագծերը և սխեմաները պետք է մշակվեն հետևյալ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների, ինչպես նաև նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և ստանդարտների պահանջներին համապատասխան՝

- 1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 113-Ն որոշում.
- 2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 1699-Ն որոշում.
- 3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշում.
- 4) ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի N 392-Ն որոշում,
- 5) ՀՀ ՇՆ IV-11.05.02-99 «Ավտոմոբիլային ճանապարհներ».
- 6) ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծումը և կառուցապատումը».

7) ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար».

- 8) ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում».
- 9) ՀՀՇՆ IV-11.05.04-97 «Թունելներ՝ երկաթուղային և ավտոճանապարհային».
- 10) ՄՆԻՊ 2.05.03-84 «Կամուրջներ և խողովակներ».
- 11) ԳՕՍՏ 32945-2014 «Ճանապարհային նշաններ: Ընդհանուր տեխնիկական պայմաններ».

12) ԳՕՍՍ Ռ 51256-99 «Ճանապարհային գծանշում: Տեսակներն ու պարամետրերը: Հիմնական ընդհանուր պահանջներ».

13) ԳՕՍՍ 25458-82 «Ճանապարհային նշանների փայտյա հենասյուներ: Տեխնիկական պայմանները».

14) ԳՕՍՍ 25459-82 «Ճանապարհային նշանների երկաթբետոնյա հենասյուներ: Տեխնիկական պայմանները».

15) ԳՕՍՍ Ռ 52282-2004 «Ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցներ.

Ճանապարհային լուսացույցներ. Տիպեր և հիմնական պարամետրեր. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ».

16) ԳՕՍՍ Ռ 50970-2011 «Ճանապարհային ազդանշանային կարճասյուներ: Ընդհանուր տեխնիկական պահանջները: Կիրառման կանոնները».

17) ԳՕՍՍ Ռ 50971-2011 «Ճանապարհային լուսանդրադարձիչներ: Ընդհանուր տեխնիկական պայմանները: Կիրառման կանոնները».

18) ԳՕՍՍ 32732-2014 «Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Շինարարական հսկողության իրականացման պահանջներ».

19) ԳՕՍՍ 32758-2014 «Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Ճանապարհային երթևեկության կազմակերպությունների ժամանակավոր տեխնիկական միջոցներ. Տեխնիկական պահանջներ և ընդունման կանոններ».

20) ԳՕՍՍ 32759-2014 «Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Ճանապարհային ուղեայուներ. Տեխնիկական պահանջներ».

21) ԳՕՍՍ 32843-2014 «Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Ճանապարհային ազդանշանային սյունիկներ. Տեխնիկական պահանջներ».

22) ԳՕՍՍ 32944-2014 «Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Հետիոտնային անցումներ. Դասակարգում. Ընդհանուր պահանջներ».

23) ԳՕՍՍ 32948-2014 «Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Ճանապարհային նշանների հենարաններ. Տեխնիկական պահանջներ».

24) ԳՕՍՍ 32953-2014 «Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Ճանապարհային գծանշում. Տեխնիկական պահանջներ».

25) ԳՕՍՍ 33025-2014 «Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Աղմուկային գծեր. Տեխնիկական պայմաններ».

26) ԳՕՍՍ 33062-2014 «Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Ճանապարհային և ճանապարհամերձ ծառայության օբյեկտների բաշխմանը ներկայացվող պահանջներ».

27) ԳՕՍՍ 33127-2014 «Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Ճանապարհային ցանկապատներ. Դասակարգում».

28) ԳՕՍՍ 33144-2014 «Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Ճանապարհային հայելիներ. Տեխնիկական պահանջներ».

29) ԳՕՍՍ 33383-2015 «Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Երկրաչափական տարրեր. Ցուցանիշների որոշման մեթոդներ».

30) ԳՕՍՍ 33383-2015 «Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Կամրջային կառույցների նախագծում. Ընդհանուր պահանջներ»:

(10-րդ կետը խմբ. 04.10.12 N 1262-Ն, 30.12.21 N 2186-Ն)

11. Նախագծերը ճանապարհային երթևեկության կազմակերպման մասով պետք է նպաստեն՝

ա) ճանապարհային ցանցի զարգացմանը, բնակավայրերում այլընտրանքային ճանապարհների նախատեսմանը՝ հաշվի առնելով երթևեկության ինտենսիվության հետագա աճը.

բ) քաղաքներից կամ դրանց կենտրոնական մասից տրանսպորտային հոսքերը շրջանցող ուղիների առկայությանը.

գ) տարբեր մակարդակներում տրանսպորտային և հետիոտնային հոսքերի բաժանմանը.

դ) նույն մակարդակի վրա բարդ հանգույցներում և փոխհատումներում երթևեկության կարգավորման և անվտանգության խնդիրների լուծմանը.

ե) ճանապարհների ինժեներական կառուցապատմանը.

զ) ճանապարհների երթևեկության կարգավորման ավտոմատացված համակարգերի ներդրմանը.

է) ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների առավելության իրավունքի ապահովմանը.

ը) վարչական, մշակութային, ուսումնական հաստատությունների շենքերի, հյուրանոցային համալիրների, հանգստյան գոտիների, առևտրային և այլ օբյեկտների մոտ ավտոկայանավայրերի և կանգառի տեղերի կառուցապատմանը.

թ) անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների բաց և փակ (ստորգետնյա) կայանատեղերի և ավտոտնակների առկայությանն ու տեղաբաշխմանը.

ժ) վառելիքի ավտոլցավորման, ավտոմոբիլների տեխնիկական սպասարկման կայանների տեղաբաշխմանը.

ժա) ճանապարհներին՝ երթևեկության մասնակիցներին սպասարկելու համար անհրաժեշտ շենքերի և կառույցների առկայությանը:

(11-րդ կետը խմբ. 04.10.12 N 1262-Ն)

12. Բնակավայրերի ճանապարհների և քաղաքային էլեկտրատրանսպորտի գծերի նախագծման ժամանակ պետք է

հաշվի առնել՝

ա) քաղաքի ճանապարհների լայնության համապատասխանությունը դրանց կարգին և տրանսպորտային միջոցների ու հետիոտնի երթևեկության հաշվարկային ինտենսիվությունը.

բ) մայթերի, հեծանվային արահետների, անվտանգության կղզյակների առկայությունը.

գ) գետներեմի, վերգետնյա և ստորգետնյա հետիոտնային անցումների տեղաբաշխումը.

դ) ավտոբուսների կանգառի կետերի, կանգառի հրապարակների և ավտոտաղավարների տեղաբաշխումը.

ե) ճանապարհների փոխհատումներում երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների նախատեսումն ու տեղաբաշխումը.

զ) լուսացուցային ազդանշաններով համակարգված կարգավորում ներդնելու դեպքում, դրանք օգտագործելու համար, կապի գծերի առկայությունը.

է) մայթերի և բաժանիչ գոտիների եզրերով երթևեկելի մասի կորացումների համապատասխան շառավիղները.

ը) տրոլեյբուսների և տրամվայների կանգառի կետերի տեղադրվածությունը.

թ) տրամվայի գծերի տեղաբաշխումը:

13. Երկաթուղային գծանցների նախագծերի համաձայնեցման ժամանակ պետք է ապահովել՝

ա) գծանցների տեսակի համապատասխանությունը տվյալ պայմանների հետ.

բ) գծանցի մոտեցումներում ճանապարհի թեքության պահպանումը.

գ) գծանցի տախտամածի ծածկի առկայությունը և դրա լայնության համապատասխանությունը սահմանված նորմերին.

դ) գծանցին մոտենալիս անհրաժեշտ տեսադաշտի ապահովումը.

ե) գծանցի կարգին համապատասխան ուղեփակոցների, ուղղորդ արգելափակոցների, եզրաչափային դարպասների, լուսային և ձայնային ազդանշանների, ճանապարհային նշանների և ցուցանակների առկայությունը.

զ) գծանցի արհեստական լուսավորության առկայությունը:

14. Ճանապարհների ընթացիկ (միջին) նորոգման աշխատանքներ կատարելու համար կազմվում է գծապատկեր, որտեղ նշվում են տեղի արգելափակումը, համապատասխան ճանապարհային նշանները, տեղամասը շրջանցելու ուղիները (անհրաժեշտության դեպքում):

Ճանապարհի որևէ գոտու վրա նորոգման և այլ աշխատանքների կատարման համար երթևեկությունը փակելու դեպքում, գծապատկերում պետք է նախատեսել երթևեկելի մասի ժամանակավոր լայնացում կամ տրանսպորտային միջոցների երթևեկության այլ ուղիներ:

Ճանապարհի որևէ տեղամասում երթևեկությունը փակելու դեպքում տրանսպորտային միջոցներ շահագործող կազմակերպություններն ու երթևեկության մասնակիցները նախօրոք պետք է տեղեկացվեն դրա և այդ տեղամասը շրջանցելու հնարավոր ուղիների մասին:

Ընթացիկ (միջին) նորոգման աշխատանքներն ավարտելուց հետո անհրաժեշտ է տեղամասը բերել բարեկարգ տեսքի:

(14-րդ կետը փոփ. 30.12.21 N 2186-Ն)

15. Ճանապարհներին իրականացվող ընթացիկ (միջին) նորոգման աշխատանքները կազմակերպում են սույն կարգի 6-րդ կետում նշված մարմինները և ճանապարհի սեփականատերը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 4 հավելվածի 2-րդ կետում նշված աշխատանքների համար կազմվող թեքությունների մասին ակտը, ինչպես նաև այդ աշխատանքների գծապատկերը կազմվում են գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված կապալառու կազմակերպության կողմից, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ, և ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասով՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով համաձայնեցվում են ճանապարհային ոստիկանության մարմնի հետ:

(15-րդ կետը փոփ. 04.10.12 N 1262-Ն, խմբ. 30.12.21 N 2186-Ն)

16. Թույլատրվում է վերացնել ինժեներական ցանցերի վթարները՝ առանց համապատասխան գրավոր համաձայնության՝ նախապես իրազեկելով համապատասխան իրավասու մարմիններին: Տվյալ դեպքում սույն կարգով սահմանված երթևեկության անվտանգության ապահովման միջոցառումներն իրականացվում են վթարը վերացնելու հետ միաժամանակ:

IV. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

17. Ճանապարհային երթևեկության կազմակերպման հիմնական պայմաններն իրականացնելու նպատակով պետք է ապահովվեն ՀՀ ՇՆ IV-11.05.02-99 «Ավտոմոբիլային ճանապարհներ» և ՄՆԻՊ «Քաղաքաշինություն: Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

18. Անհրաժեշտ է հետիոտնային անցումների, ավտոբուսների կանգառների անցումային-արագացման գոտիների, թունելների, ուղեանցների տակի հատվածների և երկաթուղային գծանցների երթևեկելի մասերն իրականացնել ավելի բաց գույնի ծածկույթով:

V. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ՆԵՐՈՂՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

19. Ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների (ճանապարհային նշաններ, գծանշում, լուսացույցներ, ճանապարհային ցանկապատներ, բարձրիքներ, պարապետներ, ուղղորդ կարճալուսներ, անվտանգության կղզյակներ, արհեստական անհարթություններ և այլն) ներդրումն իրականացվում է սույն կարգի 6-րդ կետում նշված համապատասխան մարմնի, ճանապարհի սեփականատիրոջ որոշմամբ՝ ճանապարհատրանսպորտային պատահարների վերլուծության, ճանապարհների եղանակային և այլ հետազոտությունների (ստուգումների) տվյալների, ճանապարհային երթևեկության պայմանների և վիճակի ուսումնասիրության, ինչպես նաև ճանապարհաշինարարական, կոմունալ ծառայությունների, ճանապարհային ոստիկանության մարմինների, շահագրգիռ այլ կազմակերպությունների և քաղաքացիների առաջարկությունների հիման վրա:

(19-րդ կետը փոփ., լրաց. 04.10.12 N 1262-Ն, փոփ. 19.02.15 N 161-Ն)

20. Ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցներ ներդնելու որոշում ընդունելու դեպքում՝

ա) դրանց նախագծման, տեղակայման կամ վերակառուցման համար որոշվում են տեխնիկատնտեսական պահանջները:

բ) կազմվում են կարգավորման տեխնիկական միջոցների համապատասխան տեսակների տեղաբաշխման գծապատկերները:

գ) որոշվում է դրանց պահանջարկը, կազմվում այդ միջոցների տեղակայման նախագծային աշխատանքների կատարման առաջադրանքը:

21. Ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների տեղաբաշխման գծապատկերների վրա նշվում են՝

ա) լուսացուցային կահավորանքի տեղաբաշխումը՝ հարմարեցնելով տեղանքի հետ՝ դրանք կողմնորոշելով դեպի երթևեկության մասնակիցները:

բ) տրանսպորտային և հետիոտնային հոսքերի երթևեկության ուղղությունները:

գ) երթևեկության գոտիների քանակը, բաժանիչ կամ լրացուցիչ գոտիների առկայությունը:

դ) հետիոտնային ուղղորդ արգելափակոցների տեղակայման տեղերը:

ե) երթևեկության կազմակերպման գծապատկերում ընդունված ճանապարհային նշանների տարատեղումը:

Ճանապարհային նշանների տարատեղությունները մշակվում և հաստատվում են սույն կարգի 6-րդ կետում նշված համապատասխան մարմնի, ճանապարհի սեփականատիրոջ կողմից և համաձայնեցվում են ճանապարհային ոստիկանության հետ:

(21-րդ կետը լրաց. 04.10.12 N 1262-Ն)

22. Ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցները շահագործման են ընդունում սույն կարգի 6-րդ կետում նշված համապատասխան մարմնի, ճանապարհի սեփականատիրոջ կողմից ստեղծված հանձնաժողովները, որոնք կարող են ունենալ առնվազն 4 անդամ՝ պատվիրատուն (նախագահ), ճանապարհային ոստիկանության մարմինների, կապալառուի ներկայացուցիչները, ինչպես նաև նախագծային և շահագործող կազմակերպությունների ներկայացուցիչները (իրենց համաձայնությամբ):

(22-րդ կետը փոփ. 04.10.12 N 1262-Ն)

23. Ճանապարհային երթևեկության կազմակերպման գծապատկերները վերանայելու, տեխնիկական միջոցների թերությունները վերացնելու, դրանք արդիականացնելու նպատակով անհրաժեշտ է կատարել հետազոտություններ, 5 տարին մեկ անգամ մշակել և իրականացնել նոր տարաբաշխում: Հետազոտությունները կազմակերպում են սույն կարգի 6-րդ կետում նշված համապատասխան մարմինները, իրականացնում են ճանապարհի սեփականատերերը և օրենքի համաձայն ընտրված կապալառու կազմակերպությունները՝ ճանապարհային ոստիկանության մարմինների հետ համատեղ:

(23-րդ կետը փոփ. 04.10.12 N 1262-Ն, 19.02.15 N 161-Ն)

24. Ճանապարհային երթևեկության որոշակի պայմանների, ինչպես նաև առանձին ճանապարհային նշանների ազդեցությունը դադարեցնելու անհրաժեշտություն առաջանալու դեպքերում, թույլատրվում է դրանք ժամանակավոր փակել հատուկ ծածկոցներով:

Ճանապարհային երթևեկության հատուկ պայմաններ առաջանալու դեպքում (արտակարգ իրավիճակ, տարերային աղետ, վթար և այլն) ճանապարհային երթևեկությունը կարգավորելու նպատակով թույլատրվում է ժամանակավոր տեղադրել համապատասխան ճանապարհային նշաններ: Անհրաժեշտ է ապամոնտաժել ժամանակավոր տեղադրված ճանապարհային նշանները՝ դրանց տեղադրման պատճառները վերացնելուց անմիջապես հետո:

Բնակավայրերում տեղադրված նոր ճանապարհային նշանները երթևեկության մասնակիցների ուշադրությունը հրավիրելու նպատակով դրանց կողքին կամ դրանց վրա ցանկալի է ժամանակավոր տեղադրել թարթող լուսային ազդանշաններ:

Սույն կետում նշված ճանապարհային նշանների գործողության դադարեցումը և տեղադրումը ճանապարհի լիազոր մարմինների հաստատումից հետո իրականացնում են ճանապարհներն սպասարկելու և շահագործելու համար օրենքի համաձայն ընտրված կապալառու կազմակերպությունները:

(24-րդ կետը փոփ. 04.10.12 N 1262-Ն)

VI. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԵՐԱՀԱՄԱՅՈՒՄՈՒԹՅՈՒՆԸ

25. Ճանապարհային երթևեկության կազմակերպման պայմանների և վիճակի ուսումնասիրության ժամանակ ճշտվում են՝

- ա) տրանսպորտային հոսքերի ինտենսիվությունն ու կազմը.
- բ) հետխոտնային հոսքերի ինտենսիվությունը, նրանց շարժման ուղղությունները.
- գ) տրանսպորտային հապաղումների տևողությունը.
- դ) ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը՝ վերջին 2-3 տարվա ընթացքում.
- ե) ճանապարհի երկրաչափական պարամետրերը (երթևեկելի մասի լայնությունը, երթևեկության գոտիների թիվը, հատակագծում կորերի շառավիղները, երկայնական թեքությունների երկարությունը և այլն).
- զ) ճանապարհային երթևեկության կարգավորման տեխնիկական միջոցների առկայությունը, դրանց գործառնության նշանակությունն ուսումնասիրվող տեղամասում:

Միաժամանակ 1:500 մասշտաբով կազմվում է ճանապարհի տվյալ տեղամասի երթևեկության կազմակերպման գծապատկերը:

- 26. Ամփոփ նյութերի ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է նշել՝
 - ա) ճանապարհատրանսպորտային պատահարների կուտակման վայրերը.
 - բ) տրանսպորտային միջոցների մշտական խցանումների և հապաղումների վայրերը.
 - գ) տրանսպորտային և հետխոտնային հոսքերի առավել ծանրաբեռնված տեղամասերը:
- 27. Ճանապարհներին վթարայնության մասին տեսողական երկրատեղեկատվական ժամանակակից սարքեր կիրառելով անհրաժեշտ է կատարել ճանապարհատրանսպորտային պատահարների քարտեզագրված վերլուծություն:

(27-րդ կետը փոփ. 04.10.12 N 1262-Ն)

28. Ճանապարհային երթևեկության կազմակերպման աշխատանքների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են դրա համար լիազորված մարմինները՝ օրենքով սահմանված կարգով:

29. Վերահսկողական աշխատանքների արդյունքներից ստացված տվյալների վերլուծության հիման վրա միջոցառումներ են մշակվում երթևեկության պայմանների կատարելագործման ուղղությամբ՝ ճանապարհային նշաններ տեղակայելու, լուսացուցային ազդանշաններ ներդնելու, դրանց ռեժիմները ճշտելու, վերակառուցողական միջոցառումներ իրականացնելու և նման այլ ճանապարհներով:

VII. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԶԱՅՆԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

(գլուխը լրաց. 30.12.21 N 2186-Ն)

30. Համայնքի ղեկավարը, համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման կազմում և Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների մասով (բացառությամբ Երևան քաղաքի)՝ սույն կարգի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պետական ճանապարհային մարմինների հետ, իսկ երթևեկության անվտանգության մասով՝ ճանապարհային ոստիկանության հետ համաձայնեցնում է սույն գլխով սահմանված կարգին համապատասխան:

31. Համայնքների (այսուհետ՝ համայնք կամ համայնքներ) ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմաների կազմման նպատակն է՝

- 1) նպաստել համայնքի ճանապարհային ցանցի զարգացմանը.
- 2) բարձրացնել մարդատար և բեռնատար ավտոմոբիլների երթևեկության կազմակերպման մակարդակը.
- 3) նվազեցնել ճանապարհատրանսպորտային պատահարների քանակը.
- 4) բարելավել հասարակական տրանսպորտի սպասարկման և ուղևորափոխադրումների պայմանները.
- 5) սոցիալական բոլոր խմբերի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների, ծերերի համար ստեղծել ճանապարհային երթևեկությունից օգտվելու հավասար պայմաններ.
- 6) օպտիմալացնել կայանատեղերը.
- 7) նպաստել շրջակա միջավայրի պահպանությանը.
- 8) բարելավել հետխոտների և հեծանվային արահետների անվտանգությունը և ճանապարհից օգտվելու պայմանները:

32. Համայնքի ղեկավարը մինչև համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայի կազմում և իրականացում է՝

- 1) ուսումնասիրություն՝ սույն կարգի 25-րդ և 26-րդ կետերին համապատասխան.
- 2) համայնքի (բնակավայրերի) հնգամյա զարգացման ծրագրի ուսումնասիրություն.
- 3) Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ցանցի զարգացման, շինարարության, ընթացիկ (միջին) նորոգման ու պահպանման ծրագրերի ուսումնասիրություն.
- 4) հիմք ընդունելով սույն կարգի 32-րդ կետի 1-3 ենթակետերով նախատեսված ուսումնասիրության արդյունքները՝

համայնքի վարչական տարածքով անցնող հիմնական տրանսպորտային հանգույցների մոդելի մշակում: Այս փուլում իրականացվում է համայնքի վարչական տարածքի գործող տրանսպորտային հանգույցների վերլուծություն, և կազմվում է նոր տրանսպորտային հանգույցների մոդելի մշակում:

5) ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայի կազմման գործընթացի միջոցառումների մշակում, որը պետք է ներառի համայնքի ճանապարհային երթևեկության ցանցերի զարգացման, ուղևորափոխադրումների համակարգի և ավտոկայարանատեղերի օպտիմալացման, ճանապարհային անվտանգության ընդհանուր մակարդակի բարելավման, մայթերի, հեծանվային արահետների, հետիոտնային անցումների պայմանների բարելավման և ճանապարհային երթևեկության կազմակերպման այլ միջոցառումներ:

33. Համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայի կազմման (նախագծման) ժամանակ պետք է հաշվի առնել

1) համայնքի բնակավայրերի ճանապարհների լայնության համապատասխանությունը ավտոմոբիլային ճանապարհի երթևեկության հաշվարկային ինտենսիվության և գործառական նշանակության դասակարգման կարգին:

2) համայնքի բնակավայրերով անցնող տրանսպորտային միջոցների ու հետիոտնի երթևեկության հաշվարկային ինտենսիվությունը՝ ըստ յուրաքանչյուր բնակավայրի և համայնքի:

3) մայթերի, հեծանվային արահետների, անվտանգության կղզակների առկայությունը:

4) ճանապարհի օտարման շերտի, վերգետնյա և ստորգետնյա հետիոտնային անցումների տեղաբաշխումը:

5) հասարակական տրանսպորտի կանգառի կետերի, կանգառի հրապարակների և ավտոտաղավարների տեղաբաշխումը:

6) ճանապարհների փոխհատումներում երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների նախատեսումն ու տեղաբաշխումը:

7) լուսացուցային ազդանշաններով համակարգված կարգավորում ներդնելու դեպքում՝ դրանք օգտագործելու համար կայի գծերի առկայությունը:

8) մայթերի և բաժանիչ գոտիների եզրերով երթևեկելի մասի կորացումների համապատասխան շառավիղները:

9) քաղաքաշինական բաժանիչ գոտիների եզրերով երթևեկելը:

34. Համայնքի ղեկավարը, համայնքի երթևեկության կազմակերպման սխեմաները նախքան ավագանու կողմից հաստատմանը ներկայացնելը, դրանք համաձայնեցնում է՝

1) համայնքներով անցնող (բացառությամբ Երևան քաղաքով անցնող) միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների մասով՝ նախարարության հետ:

2) մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների մասով՝ համապատասխան մարզպետարանների հետ:

3) ճանապարհների երթևեկության անվտանգության մասով՝ ճանապարհային ոստիկանության հետ:

35. Համայնքի ղեկավարը (բացառությամբ Երևան քաղաքապետի), պետական ճանապարհային մարմնի համաձայնությունը ստանալու նպատակով, Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ նախարարություն, իսկ մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ համապատասխան մարզպետարան գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ներկայացնում է՝

1) համապատասխան գրություն (դիմում):

2) համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման համապարփակ սխեմայի նախագիծը, որն իր մեջ ներառում է ճանապարհային երթևեկության կազմակերպման բոլոր անհրաժեշտ տեխնիկական միջոցները:

3) սույն կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետում նշված համայնքի բնակավայրերի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայով նախատեսված երթևեկության կազմակերպման բարելավման կարճաժամկետ (մեկից մինչև երեք տարիների), միջնաժամկետ (երեքից մինչև հինգ տարիների) և երկարաժամկետ (հինգ և ավելի տարիների) միջոցառումները, որոնք ներառում են յուրաքանչյուր միջոցառման իրականացման ժամկետը, առաջարկվող միջոցառումների իրականացման տարածական (հասցեական) և ժամկետային փոխկապվածությունը, առաջարկվող միջոցառման հասցեական և ամբողջական փոխկապվածությունը համայնքի գլխավոր հատակագծով նախատեսված նախագծային լուծումների հետ:

4) ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայում ներառված ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի բարելավմանն ուղղված միջոցառումներում ներառված առաջարկությունների վերաբերյալ հիմնավորումները:

36. Սույն կարգի 34-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված պետական ճանապարհային մարմինները (այսուհետ՝ ճանապարհը տնօրինող), յուրաքանչյուրն իրեն վերապահված իրավասության մասով, սույն կարգի 35-րդ կետում նշված փաստաթղթերն ստանալու օրվանից տասը աշխատանքային օրվա ընթացքում՝

1) ուսումնասիրում են ներկայացված փաստաթղթերը:

2) համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման համապարփակ սխեմայում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի տեղադրման առաջարկությունները համադրում են իրենց զարգացման ծրագրերով նախատեսվող միջոցառումների հետ:

3) կազմում և գրավոր կամ էլեկտրոնային եղանակով համայնքի ղեկավարին են տրամադրում եզրակացություն:

37. Ճանապարհը տնօրինողը եզրակացություն կազմելիս հաշվի է առնում՝

1) ավտոմոբիլային ճանապարհների ցանցի զարգացման ծրագրերը (կառուցում, վերակառուցում, հիմնանորոգում, ընթացիկ (միջին) նորոգում, պահպանում ու շահագործում)։

2) համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման համապարփակ սխեմայով առաջարկվող ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի տեղադրման առաջարկությունների համապատասխանությունը սույն կարգի 10-րդ կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներին, շինարարական նորմերին և ստանդարտներին։

38. Ճանապարհը տնօրինողի կողմից անհամաձայնության մասին եզրակացություն է տրվում, եթե սույն կարգի 35-րդ կետում ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում՝

1) ճանապարհը տնօրինողի ավտոմոբիլային ճանապարհների ցանցի զարգացման (կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման, ընթացիկ (միջին) նորոգման, պահպանման ու շահագործման) ծրագրերին։

2) սույն կարգի 10-րդ կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներին, շինարարական նորմերի և ստանդարտների պահանջներին։

39. Ճանապարհը տնօրինողի կողմից համայնքի ղեկավարին տրամադրվող անհամաձայնության մասին եզրակացության մեջ պետք է նշվի անհամաձայնության հիմքը՝ սույն կարգի 38-րդ կետի պահանջներին համապատասխան։ Անհամաձայնության մասին եզրակացության ներկայացման դեպքում համայնքի ղեկավարին են ներկայացվում նաև թերությունների վերացման վերաբերյալ առաջարկությունները, որոնց հիման վրա համայնքի ղեկավարը լրամշակում և սույն կարգով սահմանված ընթացակարգին համապատասխան՝ սույն կարգի 35-րդ կետում ներկայացված փաստաթղթերը ներկայացնում է ճանապարհը տնօրինողի համաձայնեցմանը։

40. Սույն որոշման 39-րդ կետում նշված անհամաձայնության եզրակացությունը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով։

41. Համայնքի ղեկավարը, ճանապարհը տնօրինողի կողմից ներկայացված դրական եզրակացության դեպքում՝ երթևեկության անվտանգության ապահովման մասով ճանապարհային ոստիկանության համաձայնությունը ստանալու նպատակով, ներկայացնում է՝

1) սույն կարգի 35-րդ կետում նշված փաստաթղթերը։

2) ճանապարհը տնօրինողի եզրակացությունը (բացառությամբ Երևան քաղաքի ճանապարհային երթևեկության կազմակերպման համապարփակ սխեմայի ներկայացման դեպքում)։

42. Ճանապարհային ոստիկանությունը համայնքների ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմաների մասով իր համաձայնությունը (անհամաձայնությունը), Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի N 1644-Ն որոշմամբ սահմանված կարգով, տալիս է փաստաթղթերը համայնքի ղեկավարի կողմից ստանալու օրվանից տասը աշխատանքային օրվա ընթացքում։

43. Ճանապարհային ոստիկանության կողմից անհամաձայնության ներկայացման դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից սույն կարգի 35-րդ կետում նշված փաստաթղթերը վերանայելուց հետո, սույն կարգով սահմանված ընթացակարգին համապատասխան՝ կրկին համաձայնեցվում են ճանապարհը տնօրինողի և ճանապարհային ոստիկանության հետ։

44. Համայնքի ղեկավարի կողմից համայնքի ավագանու հաստատմանը ներկայացվող ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման ներառում է հետևյալ փաստաթղթերը

1) համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման համապարփակ սխեման։

2) համայնքի բնակավայրերի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայով նախատեսված երթևեկության կազմակերպման բարելավման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումները։

45. Համայնքի ավագանու հաստատմանը ներկայացվող՝ սույն կարգի 44-րդ կետում նշված ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայի հետ միասին ավագանու քննարկմանն է ներկայացվում պետական ճանապարհային մարմնի եզրակացությունը և ճանապարհային ոստիկանության համաձայնությունը։

46. Սույն կարգի 44-րդ կետում նշված ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման, համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո, համայնքի ղեկավարը մեկամսյա ժամկետում գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ներկայացնում է ճանապարհները տնօրինողներին և ճանապարհային ոստիկանությանը։

47. Ճանապարհը տնօրինողներն իրենց տնօրինության տակ գտնվող ճանապարհների կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման և ընթացիկ (միջին) նորոգման ծրագրերի մշակման գործընթացում պետք է հաշվի առնեն համայնքի ավագանու կողմից հաստատված՝ սույն կարգի 44-րդ կետում նշված ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայում ներառված փաստաթղթերը։

48. Սույն կարգի 47-րդ կետում նշված ծրագրերի շրջանակներում շահագործման ընդունված ճանապարհահատվածների երթևեկության կազմակերպման սխեմաները ճանապարհը տնօրինողները ներկայացնում են համապատասխան համայնքի ղեկավարին՝ ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայում համապատասխան փոփոխություններ իրականացնելու համար։

49. Սույն կարգի 48-րդ կետում նշված երթևեկության կազմակերպման սխեմաների փոփոխությունները հաստատում է համայնքի ավագանին։

50. Սույն կարգի 32-րդ և 33-րդ կետերով համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայի

կազմման գործընթացները համայնքի ղեկավարն իրականացնում է գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով
ընտրված կազմակերպության միջոցով:

*(հավելվածը փոփ., խմբ., լրաց. 04.10.12 N 1262-Ն, փոփ. 19.02.15 N 161-Ն, փոփ., լրաց., խմբ.
30.12.21 N 2186-Ն)*

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան